Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
օգոստոսի 31-ի N 160 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

1.	**Ծրագրի նպատակը**	Վերակառուցել 1988 թ. երկրաշարժի հետևանքով վնասված քաղաքային Բարեկամության զբոսայգին: Ապահովել Գյումրի քաղաքի բնակիչներին զբոսանքի և ժամանցի համար բարենպաստ պայմաններով: Երկրաշարժից տուժած տնակային ավաններում ապրող 20 ընտանիքների ապահովել բնակարաններով: Գյումրի քաղաքի երիտասարդների, ինչպես նաև զբոսայգու հարակից տարածքում գտնվող մանկական հիվանդանոցի երեխաների համար ստեղծել բարենպաստ պայմաններ՝ կառուցելով հարմարավետ և հետիոտնի համար հաճելի զբոսանքի արահետներ: Նպաստել Հայաստանի 2-րդ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Նպաստել Գյումրի քաղաքի բնականոն զարգացմանը՝ ստեղծելով սոցիալական հարթակ հասարակության լայն զանգվածների համար: Զբոսայգու վերականգնումը կնպաստի քաղաքաշինության լայնածավալ զարգացմանը՝ մոտակա շրջանները պատմական կենտրոնի հետ ինտեգրելու հարցում և հարևան բնակավայրերի քաղաքացիներին շփման հարթակ ստեղծելու համար:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Ծրագրերի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործները**	«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ, ֆիզիկական անձինք (ներառյալ առանձին բարերարներ), հայկական և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններ, այդ թվում՝ հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ (ներառյալ բարեգործական), «Ազնավուր» հիմնադրամ

4.	**Ծրագիրը կատարողը**	«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ Գտնվելու վայր՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 6 Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք-Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02628286 գրանցված՝ 23.05.2014 թ.	
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Բարեկամության զբոսայգի Բնագավառը՝ սոցիալական, ինչպես նաև՝ բնության և շրջակա միջավայրի պահպանում և բարեկարգում	
6.	**Ծրագրի բյուջեն**	Ծրագրերի իրականացման բյուջեն կկազմի 1,740,475,850 դրամ:	
7.	**Բարեգործություն ստացողը**	Գյումրի քաղաքի բնակիչները, Բարեկամության զբոսայգու տարածքին կից գործող մանկական հիվանդանոց այցելողները և այնտեղ բուժվողները, Հայաստանի Հանրապետություն այցելող հյուրերը, այգու տարածքում բնակելի և առևտրային տարածքներում բնակվողները, աշխատողները	
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	01.07.2018 թ. – 01.06.2020 թ.	
9.	**Ծրագրի նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	**Միջոցառումների անվանումն ու նկարագրությունը**	**Գնահատված ծախսեր (դրամ)**

	1. **Տնակային ավաններում ապրող անօթևան ընտանիքներին բնակարաններով ապահովելու միջոցառումներ (***01.07.2018 թ. – 31.08.2018 թ.***)** Տվյալ միջոցառման շրջանակներում իրականացվելու է 20 անօթևան ընտանիքներին նվիրատվություն (յուրաքանչյուր ընտանիքին միջինը 5 մլն. դրամի չափով)՝ վերջիններիս համար բնակարաններ ձեռքբերելու նպատակով, ինչպես նաև ուսումնասիրություն տնակային ավաններում ապրողների կարգավիճակի, կարիքների և այլ մանրամասնությունների վերաբերյալ, անցակցվելու է վաճառքի ենթակա բնակարանների հավաքագրում՝ հաշվի առնելով տնակային ավաններում ապրողների կարիքները և անչափահասների քանակը տվյալ տնակում: Տնակներում ապրողների հետ, Գյումրու քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպվելու է հասարակական քննարկում՝ վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, որի արդյունքում բնակիչներին առաջարկվելու է նոր բնակավայրերի տարբերակ: Սկիզբ՝ 01.07.2018 թ., ավարտ՝ 31.08.2018թ.:	**106,700,000**

	2. **Նախագծման, պլանավորման և այլ մասնագիտական աշխատանքների իրականացում (***01.08.2018* թ.–*01.09.2018 թ.)* Միջոցառման ընթացում նախատեսվում է տարածքի ուսումնասիրություն ճանապարհային ենթակառուցվածքի, ոռոգման, հոսանքի և այլ կոմունիկացիոն ցանցերի առկայության և խնդիրների վերաբերյալ, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ուսումնասիրություն, ձևավորում և դրանց հետ կապված այլ աշխատանքներ, տարածքի էսքիզային պլանավորում, տեղագրական հանույթ, տարատեսակ նախագծերի մշակում, այլ ինժեներական հետազոտություններ, մասնագիտական և դիզայներական աշխատանքներ: Իրականացվելու է հեղինակային վերահսկում: Սկիզբ՝ 01.08.2018 թ., ավարտ՝ 01.09.2018 թ.:	**101,365,000**
	3. **Հողային աշխատանքներ (***01.09.2018թ.,- 01.11.2018թ.)* 7.5 հա տարածքում խոպան հողի համապատասխան մշակում, հին կառույցների մնացորդների քանդում, շինաղբի դուրս բերում, նոր հողի տեղափոխում Սկիզբ՝ 01.09.2018 թ., ավարտ՝ 01.11.2018 թ.:	**181,875,000**
	4. **Ինժեներական ենթակառուցվածքներ** **(***01.11.2018թ.,-01.03.2019թ.)* 7.5 հա տարածքում ինժեներական ենթակառուցվածքների տեղադրում: Սկիզբ՝ 01.11.2018թ., ավարտ՝ 01.03.2019թ.:	**163,687,500**
	5. **Առկա շինություններ (***01.11.2018 թ.,- 01.03.2019 թ.)* Գոյություն ունեցող շինությունների վերակառուցում (բեմ, այգու մուտք): Սանհանգույցների, սպասարկման շինությունների տեղադրում: Սկիզբ՝ 01.11.2018 թ., ավարտ՝ 01.03.2019 թ.:	**163,687,500**

	6. **Բարեկարգման աշխատանքներ** (*01.11.2018թ.,-01.03.2019թ.)* 7.5 հա տարածքի բարեկարգում՝ արահետների մշակում, ջրային մակերևույթների ստեղծում և շատրվանների կառուցում, 200 նստարանների տեղադրում: Սկիզբ՝ 01.11.2018 թ., ավարտ՝ 01.03.2019 թ.:	**181,875,000**
	7. **Կանաչապատման աշխատանքներ** (*01.11.2018թ.,- 01.03.2019թ.)* 7.5 հա տարածքում 200 հատ ծառի և թփերի տնկում, խոտածածկի ապահովում: Սկիզբ՝ 01.11.2018թ., ավարտ՝ 01.03.2019թ.:	**181,875,000**
	8. **Այգու տարածքում տեղադրվող կարուսելների ներմուծում և պահեստավորում** (*01.07.2018 թ.,-30.03.2019թ.)* Կարուսելների, բաղադրամասերի առանձին մասերի և այլ սարքավորումների ձեռք բերում, կարուսելների տեխնիկական զննում, տրանսպորտային տեղափոխման հետ կապված այլ ծախսեր, մաքսազերծման հետ կապված ծախսեր: Կարուսելների պահեստավորում: Մասնագիտական ծախսեր՝ կապված կարուսելները այգում տեղադրելու հետ, ինժեներական և տեխնիկական վերահսկում: Սկիզբ՝ 01.07.2017 թ., ավարտ՝ 30.03.2019 թ.:	**461,889,750**
	9. **Կարուսելների տեղադրում** *01.03.2019թ.- 01.06.2019:* 11 կարուսելների և դրանց կառավարման կետերի տեղակայման տարածքի բարեկարգում, դրանց մոնտաժում, տեղադրում և գործարկում: Սկիզբ՝ 01.03.2019 թ., ավարտ՝ 01.06.2019թ.:	**53,350,000**

	10. Շարժական գույքի վերանորոգման, ընթացիկ սպասարկման ծառայություններ: Սկիզբ՝ 01.07.2018 թ., ավարտ՝ 01.06.2019 թ.:	**4,850,000**
	11. 7.5 հա հանրային հողերի վարձակալություն: Սկիզբ՝ 01.07.2018 թ., ավարտ՝ 01.06.2020 թ.:	**1,515,625**
	12. Խորհրդատվական (այդ թվում՝ իրավաբանական և հաշվապահական) ծառայություններ, վարչական աշխատակիցների աշխատավարձը և կառավարչական ծառայություններ (ծրագրի իրականացման հետ կապված աուդիտորական, գրասենյակային և վարչական այլ ծախսեր): Սկիզբ՝ 01.07.2018 թ., ավարտ՝ 01.06.2020 թ.:	**96,664,380**
	13. Գործուղման ծախսեր՝ հյուրանոցային ծառայություններ, տրանսպորտային ծառայություններ, ավիատոմսեր և օրապահիկներ, որը նախատեսված է կազմակերպական աշխատակազմի, ծրագրի ղեկավար անձնակազմի համար: Սկիզբ՝ 01.07.2018թ., ավարտ՝ 01.06.2020թ.:	**18,124,571**
	14. Տրանսպորտային ծառայություններ, վառելիք, լոգիստիկ ծախսեր, մաքսային, բրոքերային և այլ միջնորդական ծառայություններ: Սկիզբ՝ 01.07.2018 թ., ավարտ՝ 01.06.2020 թ.:	**6,041,524**
	15. Այգու հանդիսավոր բացման, ներկայացուցչական ծախսեր, տարեկան (եռամսյակային) հանդիպումների կազմակերպում, այդ թվում՝ շահառուների համար հյուրանոցային ծառայությունների, ավիատոմսերի, սննդի, տրանսպորտային ծառայությունների ձեռք բերում: Սկիզբ՝ 01.07.2018թ., ավարտ՝ 01.06.2020թ.:	**13,580,000**

		16. Հանրային իրազեկման և մարկետինգային ծախսեր՝ տպագրական և դիզայներական ծառայություններ, այդ թվում՝ բուկլետների, այցեքարտերի, տոմսերի, հրավիրատոմսերի, հուշանվերների և այլ փաստաթղթերի գնում, տպագրություն և ձևավորում: Սկիզբ՝ 01.07.2018 թ., ավարտ՝ 01.06.2020 թ.:	**3,395,000**
		Ընդամենը	**1,740,475,850**
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	• 11 կարուսելների և դրանց բաղադրիչ մասերի, պահեստամասերի և այլ սարքավորումների, ներմուծում (ներառյալ տեղափոխման, պահեստավորման, տեխնիկական զննման ծախսերը) - **461,889,750 դրամ**, • շինարարական նյութերի, կարուսելների տեղակայման, ոռոգման համակարգերի, նստարանների, լուսավորության, անվտանգության համակարգերի ձեռք բերում և ծառայություններ – **877,850,000 դրամ**, • ծառերի և թփերի գնում (ներմուծում) և տեղադրում- **48,500,000 դրամ** • ճարտարապետական և շինարարական նախագծերի, մարկետինգային աշխատանքներ - **104,760,000 դրամ** , • հողի վարձակալության ծախս – **1,515,625 դրամ** • իրավաբանական, հաշվապահական և այլ մասնագիտական խորհրդատվական ծառայություններ - **14,499,657 դրամ** • ծրագրի իրականացման հետ պկապված աուդիտորական, գրասենյակային և վարչական այլ ծախսեր - **9,666,438 դրամ** • տրանսպորտային ծախսեր – **6,041,524 դրամ** • միջոցառումների կազմակերպման, ներկայացուցչական ծախսեր – **13,580,000 դրամ** • շարժական գույքի սպասարկման և վերանորոգման ծառայություններ - **4,850,000 դրամ**	

11	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը**	- վարչական աշխատակիցների աշխատավարձը - **72,498,285 դրամ** - իրավաբանական, հաշվապահական և այլ մասնագիտական խորհրդատվական ծառայություններ – **14,499,657 դրամ** - ծրագրի իրականացման հետ կապված աուդիտորական, գրասենյակային և վարչական այլ ծախսեր - **9,666,438 դրամ** - գործուղման ծախսեր – **18,124,571 դրամ** - տրանսպորտային ծախսեր – **6,041,524 դրամ** - միջոցառումների կազմակերպման, ներկայացուցչական ծախսեր – **13,580,000 դրամ** - շարժական գույքի սպասարկման և վերանորոգման ծառայություններ - **4,850,000 դրամ**
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ**	ՀՀ նախագահ, ՀՀ նախագահի աշխատակազմ, ՀՀ վարչապետ, ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Շիրակի մարզպետարան, Գյումրու համայնքապետարան, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Սույն ծրագրի իրականացման վերահսկողությունն իրականացնելու է Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամը: Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, Գյումրու համայնքապետարան, ինչպես նաև այլ շահագրգիռ մարմիններին: Հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ